

Պ-316-27.08.2013, 18.10.2013-ԳԿ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը «տարածքային մարմնի» բառերից հետո լրացնել «(Երեւան քաղաքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ոլորտի նախարարության)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հուշարձանների քանդումն արգելվում է:

Հանրապետական եւ տեղական նշանակության հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքում, եթե հուշարձանի նյութական պահպանությունը հրամայաբար պահանջում է այն տեղափոխել: Այս դեպքում լիազոր մարմինը անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի հարմար վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման եւ վերականգնման համար: Հանրապետական եւ տեղական նշանակության հուշարձանի տեղափոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ:

Հուշարձանի փոփոխումը կատարվում է բացառիկ՝ նրա սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ օգտագործելու անհնարինության և (կամ) շահագործման նորմատիվային պահանջներին համապատասխանեցնելու դեպքերում: Հուշարձանի փոփոխումը չի կարող զուգորդվել նրա պատմական, գիտական և գեղարվեստական արժեք հանդիսացող արտաքին ու ներքին ծավալների, դրանց առանձին տարրերի ու դրվագների անդարձելի խեղմամբ, աղձատմամբ կամ ոչնչացմամբ:

Հանրապետական նշանակություն ունեցող հուշարձանների փոփոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, իսկ տեղական նշանակություն ունեցող հուշարձանների

փոփոխումը՝ պետական կառավարման տարածքային մարմինների (Երեւան քաղաքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ոլորտի նախարարության) թույլտվությամբ:

Հուշարձանների տեղափոխման եւ փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի դրական եզրակացության հիման վրա:

Նախքան հուշարձանը տեղափոխելը կամ փոփոխելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ դրանք կատարելու ընթացքում, լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիտական ուսումնասիրման, չափագրման եւ լուսանկարման աշխատանքները:

Սույն հոդվածով նախատեսված աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը կատարվում են հուշարձանի տեղափոխման կամ փոփոխման թույլտվություն ստացողի հաշվին:»:

Հոդված 3. Օրենքի 36-րդ հոդվածի «բ» կետը «(տարածքային մարմին» բառերից հետո լրացնել «Երեւան քաղաքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ոլորտի նախարարությանը)» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ¹

Առաջարկության հեղինակը	Հոդված, մաս, կետ	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը կամ հիմնավորումը
Հեղինակներ	Հոդված 1	«(Երեւան քաղաքում Երեւանի քաղաքապետի)» բառերը փոխարինել «(Երեւան քաղաքում` Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ոլորտի նախարարության)» բառերով:	Փոփոխությունը ուղղված է Նախագծի 1-ին հոդվածը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթերին համապատասխանեցնելուն, որի 9-րդ հոդվածը սահմանում է. «Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը: Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունն այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին»:
ՀՀ Կառավարություն	Հոդված 1	Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու նպատակով առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում «պարբերությունը» բառը փոխարինել «մասում» բառով`	Առաջարկը չի ընդունվել, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի

¹ Այսուհետ` Նախագիծ

		<p>համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:</p>	<p>Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների և Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Առաջարկությունում նշված պարբերությունը համարակալված է, ուստի այն պետք է դիտարկել, ոչ թե որպես մաս, այլ՝ պարբերություն:</p>
<p>Հեղինակներ</p>	<p>Հոդված 2</p>	<p>Նախագծով փոփոխվող 21-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությունում «իրավասու» բառը փոխարինել «լիազոր» բառով:</p>	<p>Փոփոխությունը խմբագրական բնույթի է:</p>

<p>Հեղինակներ</p>	<p>Հոդված 2</p>	<p>Նախագծով փոփոխվող 21-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը շարադել հետևյալ խմբագրությամբ. «Հուշարձանի փոփոխումը կատարվում է բացառիկ՝ նրա սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ օգտագործելու անհնարինության և (կամ) շահագործման նորմատիվային պահանջներին համապատասխանեցնելու դեպքերում: Հուշարձանի փոփոխումը չի կարող զուգորդվել նրա պատմական, գիտական և գեղարվեստական արժեք հանդիսացող արտաքին ու ներքին ծավալների, դրանց առանձին տարրերի ու դրվագների անդարձելի խեղմամբ, աղճատմամբ կամ ոչնչացմամբ:»</p>	<p>Փոփոխությունը նպատակ է հետապնդում առավել առավել հստակ սահմանել հուշարձանի փոփոխման բացառիկ դեպքերը և կարգը, ինչը կարգավորումը կդարձնի էլ առավել որոշակի: Նշված կարգավորումը հնարավորություն կընձեռնի խուսափել չարաշահումներից և Օրենքի դրույթների կամայական մեկնաբանություններից:</p>
<p>Հեղինակներ</p>	<p>Հոդված 2</p>	<p>Նախագծով փոփոխվող 21-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում «(Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի) » բառերը փոխարինել «(Երևան քաղաքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ոլորտի նախարարության)» բառերով:</p>	<p>Փոփոխությունը ուղղված է Նախագծի 2-ին հոդվածը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխանեցնելուն, որի 9-րդ հոդվածը սահմանում է. «Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը: Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն</p>

			իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունն այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին»:
ՀՀ Կառավարություն	Հոդված 2	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասը «լիազորված մարմնի» բառերից հետո լրացնել «դրական» բառով:	Առաջարկությունը ընդունված է:
Հեղինակներ	Հոդված 3	«(Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին)» բառերը փոխարինել «(Երևան քաղաքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ոլորտի նախարարությանը)» բառերով:	Փոփոխությունը ուղղված է Նախագծի 3-ին հոդվածը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխանեցնելուն, որի 9-րդ հոդվածը սահմանում է. «Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը: Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունն այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին»: